«Երաշխավորված է» «Հաստատված է»

Տնօրենի՝ ՄԿԱ գծով տեղակալ՝ ______ Ռ. Հասասյան Տնօրեն՝ ______ Գ. Ղարիբյան

«31» ___08___ 2023 թ. «31» ___08___ 2023 թ.

«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Գավառի Ս. Քոչարյանցի անվան N1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

# Դասղեկի տարեկան աշխատանքային պլան

## VII Բ դասարան

Մալխասյան Ելենա Արմենի

2023-2024 ուստարի

Ամենակարևոր երևույթը դպրոցում, ամենաուսուցանող առարկան, ամենալավ կենդանի օրինակը. այս ամենն ամբողջանում է ուսուցչի մեջ: ԱԴՈԼՖ ԴԻՍՏԵՐՎԻԳ

Մանկավարժը մարդկային հոգու ինժեներն է: ՄԻԽԱՅԻԼ ԿԱԼԻՆԻՆ

Դասղեկ լինել՝ նշանակում է. . մեծ պատասխանատվություն կրել, . կարողանալ լսել և հասկանալ, . հոգ տանել դասարանի յուրաքանչյուր աշակերտի մասին՝ նրա հոգեկան, ֆիզիկական և բարոյական վիճակի մասին, . աջակցել (ուսման, դասարանի, ծնողների և շրջակա սոցիումի հետ շփման մեջ, ինքնաբացահայտման և ինքնազարգացման մեջ), . ղեկավարել և կարգուկանոն պահպանել, . փոխարինել ծնողներին, ավագ ընկերոջը (եթե դրա կարքը կա), . արդարամիտ լինել:

## ԿՐԹԱԿԱՆ – ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

I կիսամյակ

| Դասղեկի գործունեության ոլորտները | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր |
|---|---|---|---|---|
| Կազմակերպչական աշխատանք | 1. Դասագրքերով ապահովվածության կազմակերպում (հետևել աշակերտների գրենական պիտույքների և դասագրքերի ամենօրյա առկայությանը)<br>2. Աշակերտական խորհրդի ընտրություն (ներկայացնել աշակերտական խորհրդի կանոնադրությունը, աշակերտի իրավունքները և պարտականություններ<br>3. Դասարանում հերթապահության կազմում (կատարել աշակերտների խմբային բաժանում՝ դասարանում ամենօրյա մաքրություն ապահովելու նպատակով )<br>4.Ծանոթացում դպրոցի տարեկանման պլանին (աշակերտներին ներկայացնել դպրոցի տարեկանման ուղիները | 1. Դասարանում հերթապահության իրականացում (հետևել աշխատանքների բարեխիղճ կատարմանը)<br>2. Դասարանական անկյան ձևավորում (աշակերտների ջանքերով դասարանում ստեղծել սիրված հեղինակներին նվիրված պաստառներ)<br>3.Աշակերտների հաճախումների ստուգում և վերահսկում | 1.Հերթապահության իրականացում ( հետևել դասարանում մաքրության աշխատանքների բարեխիղճ կատարմանը)<br>2. Դպրոցական դասագրքերի և աշակերտական պիտույքների վիճակի ստուգում (հետևել աշակերտների գրենական պիտույքների և դասագրքերի ամենօրյա առկայությանը)<br>Աշակերտների հաճախումների ստուգում և վերահսկում | 1. Դասարանում հերթապահության կատարման վերահսկում<br>2. Դասարանական անկյան ձևավորում (ներկայացնել դասարանի նկարիչ-աշակերտների գեղեցիկ աշխատանքները )<br>3. Դասարանում ամանորյան ձևավորման կազմակերպում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Քաղաքացիական, բարոյական-<br><br>Խնդիրները՝<br>Քաղաքացիական պատասխանատվության, արժանապատվության ձևավորում, հարգանք իր երկրի մշակույթի և պատմության հանդեպ: | 1.Գիտելիքի օր(զրուցել կրթության մասին)<br>2.Նախորդ ուստարվա արդյունքների վերլուծում, նոր ուստարվա անելիքների ծրագրում<br>3. 21 սեպտեմբերի Անկախության տոն (աշակերտների հետ զրուցել հայրենիքի հանդեպ սիրո և նվիրվածության մասին, լսել կարծիքներ անկախության անգնահատելի դերի մասին) | Զրույցներ պատմամշակութային հուշարձանների մասին (դիտել պատմամշակութային հուշարձանների մասին ֆիլմեր,նկարներ: Զրուցել նկարների շուրջ: Այցելել պատմամշակութային վայրեր) | 44-օրյա պատերազմում զոհված զինվորներին նվիրված զրույց (զրուցել հերոս տղաների սխրանքների մասին և արժևորել նրանց հայրենասիրությունը) | Զրույցներ մարդու իրավունքների և քաղաքացիության մասին<br><br>Օգնել երեխային արդյունավետ կերպով հարմարվել աշխարհում անընդհատ տեղի ունեցող փոփոխություններին(կազմակերպել զրույց թեմայի շուրջ)<br><br>Բնական աղետներ<br>Երկրաշարժի զոհերի հիշատակի օր (զրուցել թեմայի մասին, դիտել տեսաֆիլմի ) |
| Հոգևոր դաստիարակություն, գեղագիտական դաստիարակություն<br>Խնդիրները՝<br>Զարգացնել մարդ-արվեստ, մարդ-բնություն կապը:<br>Սերմանել սեր և հարգանք գեղեցկության նկատմամբ, ընկերների, ժողովրդի, հայրենիքի և մշակույթի հանդեպ: | « Ուսուցչի օր»<br>հանձնարարել աշակերտների պատրաստել գեղեցիկ բացիկներ, սովորել մաղթանքներ, ուսուցչին նվիրված բանաստեղծություններ | Աշնան ոսկե գույները (աշնանային տրամադրություն ստեղծող երաժշտության ներքո կազմակերպել աշնանային պոեզիայի դաս): | Հոգու կրթություն և մտքի թռիչք (կազմակերպել ֆիլմի դիտում, հետո վերլուծել կերպարները, զրուցել բարության, հոգու անաղարտության մասին) | Ամանորյա տոներ (պատրաստել ամանորյա բացիկներ,գրել ջերմ մաղթանքներ)<br>Դասարանի ձևավորում(գեղեցիկ ձևավորել դասարանը) |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ֆիզիկական առողջության խնդիրները՝<br>Ֆիզիկական զարգացմանն ուղղված պայմանների ստեղծում, վնասակար սովորությունների հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորում | Առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորում (առողջ ապրելակերպի վերաբերյալ կազմակերպել զրույցներ բուժքրոջ հետ, զրուցել օրվա ռեժիմի ճիշտ կազմակերպման մասին)<br>Ֆիզիկական որակների ձևավորում՝ ճարպկության, արագաշարժության, դիմացկունության, ուժի զարգացում, կատարելագործում(կազմակերպել արշավներ,մրցույթներ ֆիզիկական պատրաստվածությունը ստուգելու նպատակով) | Առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորում<br>Մարմնակրթություն, առողջապահություն<br>Հիգիենիկ հարցեր<br>(առողջ ապրելակերպի և հիգիենիկ հարցերի վերաբերյալ կազմակերպել զրույցներ բուժքրոջ հետ, կազմել օրվա ռեժիմ,տեսաֆիլմերի դիտում անցկացնել և քննարկել ֆիլմը ) | Հիգիենիկ հարցեր Օրգանիզմի կոփում, ճիշտ կեցվածքի ձևավորում, հարբաթաթության կանխում.<br>Առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորում<br>(անցկացնել զրույց առողջ ապրելակերպի մասին. օրվա ռեժիմի ճշգրիտ կառուցում, անձնական հիգիենայի պահպանում) | Առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորում<br>Անձի բարոյակամային որակական գծերի՝ ինքնուրույնության, ակտիվության,մարդկային փոխհարաբերության կուլտուրայի դաստիարակում<br>(առողջ ապրելակերպի և հիգիենիկ հարցերի վերաբերյալ կազմակերպել զրույցներ բուժքրոջ հետ, տեսաֆիլմերի դիտում կազմակերպել և քննարկել ֆիլմը) |
| Աշխատանքային դաստիարակություն խնդիրները՝<br>Աշխատանքային հմտությունների և կառուցողական վերաբերմունքի խթանում: | Աշխատանքային հմտությունների խթանում (կազմակերպել դասասենյակի թեմատիկ պաստառների ստեղծման, ծաղիկների խնամքի աշխատանքները)<br>(կազմակերպել դասարանի սանիտարական վիճակի պահպանումը:<br>Կազմել դասարանում հերթապահության գրաֆիկ, հետևել աշխատանքների կանոնավոր իրականացմանը): | Աշխատանքի նկատմամբ պահանջմունքի ձևավորումը, դաստիարակությունը:<br>Աշակերտների աշխատանքային գործունեության կազմակերպումը և աշխատանքային կարողությունների և հմտությունների ձևավորումը(զրույց թեմայի շուրջ) : | Ծաղիկների խնամք<br>(աշակերտներին հանձնարարել խնամել դասարանային բույսերը )<br>Դասրանի սանիտարական վիճակի պահպանում (հետևել դասարանում հերթապահության կանոնավոր իրականացմանը): | Դասասենյակի ամանորյա ձևավորում(աշակերտների հետ համատեղ գեղեցիկ ձևավորել դասարանը)<br>Զարգացնել, ամրացնել երեխայի մեջ եղած ամեն լավը, դրականը, ազնիվը, նպատակին հասնելու ձգտումը(զրուցել թեմայի շուրջ) |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Իրավական դաստիարակություն Խնդիրները՝<br>Իրավական գիտակցության և հանդուրժողականության խթանում | Աշակերտական խորհրդի ընտրություն (ներկայացնել աշակերտական խորհրդի կանոնադրությունը, աշակերտի իրավունքները և պարտականություններ) | Դպրոցի կանոնադրություն, իրավունքներ և պարտականություններ(աշակերտներին ներկայացնել դպրոցի կանոնադրությունը, զրուցել աշակերտների իրավունքների և պարտականությունների մասին) | Քաղաքացիական պատասխանատվության ձևավորում<br>(զրուցել քաղաքացու պարտականությունների մասին, սեր և հարգանք, պատասխանատվություն սերմանել հայրենիքի պատմության, մշակույթի հանդեպ ) | «Երեխայի իրավունքների» հռչակագրի ուսումնասիրում(ընթերցել և վերլուծել հռչակագրի կետերը) |
| Էկոլոգիական դաստիարակություն Խնդիրները՝<br>Բնության հանդեպ հոգատար վերաբերմունքի ձևավորում | Իմ շրջակայքը (զրուցել թեմայի մասին)<br><br>Բույսերի խնամք (ամենօրյա խնամք իրականացնել դասարանայի բույսերի նկատմամբ) | Ծաղիկների խնամք<br>Բնապահպանություն (կազմակերպել բնության պահպանությանը նվիրված աշխատանքներ դպրոցի բակում) | Երկրագունդը բոլորիս տունն է (տեսաֆիլմերի դիտում կազմակերպել և քննարկել բնության պահպանության շուրջ տարվող աշխատանքները, առաջարկել հետաքրքիր ծրագրեր )<br>Ծաղիկների խնամք(խնամել բույսեր) | Ծաղիկների խնամք(ամենօրյա խնամք իրականացնել դասարանայի բույսերի նկատմամբ) |
| Ռազմահայրենասիրական դաստիարակություն Խնդիրները՝<br>Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք հայրենիքի, ակնածանք՝ ֆիդայիների և հայ ազատամարտիկների նկատմամբ:<br>Բնավորության մեջ ձևավորել հայրենասիրություն և ռազմարվեստ: | 27 սեպտեմբերի Հիշատակի օր<br>(զոհված հերոսների անկյան մոտ ծաղկեդրում, մոմավառում կազմակերպել:<br>Իրականացնել զրույց և յուրաքանչյուր սովորողի մոտ արմատավորել սեփական ազգի պատմության ու պետության կայացման գործում իր մասնակցության կարևորությունը) | Աշակերտի մոտ ձևավորել հարգալից վերաբերմունք լեզվի, մշակույթի և ազգային ավանդույթների նկատմամբ` դարձնելով նրան այդ արժեքների կայուն կրող (զրուցել թեմայի մասին) | Նպաստել հայության ինքնության ամրապնդմանը նպաս-<br>տող աշխատանքների իրականացմանը (զրուցել թեմայի մասին) | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Աշխատանք ծնողների հետ | (իրականացնել դասարանի ծնողների կողմից ծնողական խորհրդի քարտուղարի ընտրություն, ծնողկոմիտեի ընտրում, խմբի ձևավորում:<br>Կատարել անհատական զրույց ծնողների հետ:<br>Ծնողներին ներգրավել դաստիարակչական աշխատանքներին՝ ծնող-ուսուցող, ծնող-խորհրդատու:<br>Սերտ համագործակցել ԿԱՊԿՈՒ աշակերտների ծնողների հետ, մանկատան սաների դաստիարակի հետ, հոգեբանի հետ) | (անհատական աշխատանք իրականացնել խնդրահարույց աշակերտի ծնողների հետ, մանկատան սաների դաստիարակի հետ, հոգեբանի հետ):<br>(մասնակցել ԿԱՊԿՈՒ աշակերտների դասավանդող ուսուցիչների, ԱԽ անդամների և ծնողների ամենամսյա ժողովներին) | (անհատական աշխատանք իրականացնել ծնողների հետ, մանկատան սաների դաստիարակի հետ, հոգեբանի հետ)<br>(հրավիրել ծնողական ժողովներ, մասնակցել ԿԱՊԿՈՒ աշակերտների դասավանդող ուսուցիչների, ԱԽ անդամների և ծնողների ամենամսյա ժողովներին) | (անհատական աշխատանք իրականացնել ծնողների հետ, նրանց ներգրավել դաստիարակչական աշխատանքներին) |

## **II** կիսամյակ

| | Աշխատանքի ուղղվածությունը | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս |
|---|---|---|---|---|---|---|
| | Քաղաքացիական, բարոյական– Խնդիրները՝<br>Քաղաքացիական պատասխանատվության, արժանապատվության ձևավորում, հարգանք իր երկրի մշակույթի և պատմության հանդեպ: | Առաջին կիսամյակի ուսումնական արդյունքների ամփոփում, վերանայում(զրուցել թեմայի շուրջ) | Բարոյական արժեքներ, որ իմաստավորում են մեր կյանքը(տեսաֆիլմ դիտել և զրուցել կերպարների բարեյական արժեքների մասին) | Ո՞րն է իրական գեղեցկությունն ու հմայքը (զրուցել թեմայի շուրջ)<br>Մարտի 8-ը՝ Կանանց միջազգային օր(կազմակերպել միջոցառում՝ նվիրված Կանանց միջազգային օրվան) | Հայաստանի հուշարձաններ(տեսաասահիկի միջոցով նկարներ դիտել և զրուցել թեմայի շուրջ)<br>Ո՞ւր կուզենայիք գնալ (քննարկել, թե պատմամշակութային ինչպիսի՞ վայրեր կարելի է այցելել ) | Ինքնատիրապետման մի քանի հարցեր(զրուցել թեմայի շուրջ) |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Հոգևոր դաստիարակություն, գեղագիտական դաստիարակություն Խնդիրները՝<br>Զարգացնել մարդ-արվեստ, մարդ-բնություն կապը:<br>Սերմանել սեր և հարգանք գեղեցկության նկատմամբ, ընկերների, ժողովրդի, հայրենիքի և մշակույթի հանդեպ: | Հոգու կրթություն,գեղագիտական դաստիարակություն (աշակերտների մոտ ձևավորել գեղագիտական ճաշակ տեսաֆիլմերի միջոցով) | Հոգու կրթություն և մտքի թռիչք (աշակերտներին ծանոթացնել ազգային ավանդույթներին և տոներին)<br><br>Թումանյանական օրեր(պատրաստել փոքրիկ միջոցառում՝ նվիրված Թումանյանին, կազմակերպել գիրք նվիրելու արարողություն) | Մեդիա տեղեկատվության մշակույթի զարգացում (աշակերտներին ծանոթացնել ՏՀՏ-ներից ճիշտ օգտվելու կուլտուրայի)<br>Հեքիաթների աշխարհում (ընթերցել սիրված հեքիաթներ, քննարկել,թե ինչ է սովորեցնում հեքիաթը) | Գիտատեխնիկական զարգացվածության բարձրացում<br><br>(զարգացնել ՏՀՏ-ներից ճիշտ օգտվելու կուլտուրան) | Բնության զարթոնք (զրուցել թեմայի շուրջ) |
| | Ֆիզիկական առողջության Խնդիրները՝<br>Ֆիզիկական զարգացմանն ուղղված պայմանների ստեղծում, վնասակար սովորությունների հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորում: | Առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորում (առողջ ապրելակերպի վերաբերյալ կազմակերպել զրույցներ բուժքրոջ հետ, զրուցել օրվա ռեժիմի ճիշտ կազմակերպման մասին)<br>Ֆիզիկական որակների ձևավորում՝ ճարպկության, արագաշարժության, դիմացկունության, ուժի զարգացում, կատարելագործում(կազմակերպել արշավներ,մրցույթներ ֆիզիկական պատրաստվածությունը ստուգելու նպատակով) | Առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորում (առողջ ապրելակերպի և հիգիենիկ հարցերի վերաբերյալ կազմակերպել զրույցներ բուժքրոջ հետ, տեսաֆիլմերի դիտում անցկացնել և քննարկել ֆիլմը) | Առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորում Մարմնակրթություն, առողջապահություն Հիգիենիկ հարցեր | Առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորում (անցկացնել զրույց առողջ ապրելակերպի մասին) | Առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորում Մարմնակրթութ-յուն,առողջապահություն (առողջ ապրելակերպի և հիգիենիկ հարցերի վերաբերյալ կազմակերպել զրույցներ բուժքրոջ հետ, տեսաֆիլմերի դիտում կազմակերպել և քննարկել ֆիլմը |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Աշխատանքային դաստիարակություն Խնդիրները՝<br>Աշխատանքային հմտությունների և կառուցողական վերաբերմունքի խթանում: | Աշխատանքային հմտությունների խթանում (կազմակերպել դասասենյակի կանաչապատում, ծաղիկների խնամք) (կազմակերպել դասարանի սանիտարական վիճակի պահպանումը:Հետևել դասարանում հերթապահության կանոնավոր իրականացմանը): | Դասարանի սանիտարական վիճակի պահպանում, հերթապահություն դասարանում (կազմակերպել դասարանի սանիտարական վիճակի պահպանումը:Հետևել դասարանում հերթապահության կանոնավոր իրականացմանը): | Դասարանի սանիտարական վիճակի պահպանում, հերթապահություն դասարանում (կազմակերպել դասարանի սանիտարական վիճակի պահպանումը:Հետևել դասարանում հերթապահության կանոնավոր իրականացմանը): | Դասարանի սանիտարական վիճակի պահպանում, հերթապահություն դասարանում (կազմակերպել դասարանի սանիտարական վիճակի պահպանումը:Հետևել դասարանում հերթապահության կանոնավոր իրականացմանը): | Դասարանի սանիտարական վիճակի պահպանում, հերթապահություն դասարանում (կազմակերպել դասարանի սանիտարական վիճակի պահպանումը:Հետևել դասարանում հերթապահության կանոնավոր իրականացմանը): |
| Էկոլոգիական դաստիարակություն Խնդիրները՝<br>Բնության հանդեպ հոգատար վերաբերմունքի ձևավորում | Ծաղիկների խնամք(ամենօրյա խնամք իրականացնել դասարանային բույսերի նկատմամբ)<br>Բնապահպանություն (զրուցել թեմայի շուրջ) | Գեղեցիկը ճանաչելու պահանջմունքի զարգացումը(զրուցել թեմայի շուրջ) | Ծաղիկների խնամք (ամենօրյա խնամք իրականացնել դասարանային բույսերի նկատմամբ) | Գեղեցիկի ոլորտում դրսևորվելու և այն ստեղծելու կարողությունների ձևավորում<br>(զրուցել թեմայի շուրջ) | Բնապահպանութ յուն<br>(կազմակերպել բնության պահպանությանը նվիրված աշխատանքներ դպրոցի բակում) |
| Ռազմահայրենասիրական դաստիարակություն Խնդիրները՝<br>Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք հայրենիքի, ակնածանք՝ ֆիդայիների և հայ ազատամարտիկների նկատմամբ:<br>Բնավորության մեջ ձևավորել հայրենասիրություն և ռազմարվեստ: | Հայրենի՛ք,ես զարկն եմ քո բազկի<br>(պատրաստել Բանակի օրվան նվիրված բացիկներ, զրուցել թեմայի շուրջ, երգել հայրենասիրական երգեր) | Հայոց բանակ(կազմակերպել տեսաֆիլմի դիտում, զրուցել հայրենիքի նվիրյալների,նրանց հայրենանվեր հերոսությունների մասին) | Սեր և հարգանք հայրենիքի նկատմամբ (յուրաքանչյուր սովորողի մոտ արմատավորել սեփական ազգի պատմության ու պետության կայացման գործում իր մասնակցության կարևորությունն ու դրա իրական հնարավորությունը) | Հայոց<br>Ցեղասպանություն<br>Հույս և հավատ սեփական ուժերի հանդեպ<br>Ապրիլի 24-ը<br>/ հիշատակման օր/<br>(աշակերտների հետ ծաղկեդրում կատարել, զրուցել թեմայի շուրջ) | Հաղթանակների ամիս մայիս Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 77-րդ տարելիցը (զրուցել թեմայի շուրջ) |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Աշխատանք ծնողների հետ | (իրականացնել անհատական զրույց ծնողների հետ: Ծնողներին ներգրավել դաստիարակչական աշխատանքներին՝ ծնող-ուսուցող, ծնող-խորհրդատու: Համագործակցել ԿԱՊԿՈՒ աշակերտների ծնողների հետ, մանկատան սաների դաստիարակի հետ, հոգեբանի հետ) | (անհատական աշխատանք իրականացնել խնդրահարույց աշակերտի ծնողների հետ, մանկատան սաների դաստիարակի հետ, հոգեբանի հետ): (մասնակցել ԿԱՊԿՈՒ աշակերտների դասավանդող ուսուցիչների, ՀԽ անդամների և ծնողների ամենամսյա ժողովներին) | (հրավիրել ծնողական ժողովներ, անհատական աշխատանք իրականացնել խնդրահարույց աշակերտի ծնողների հետ, մանկատան սաների դաստիարակի հետ, հոգեբանի հետ, մասնակցել ԿԱՊԿՈՒ աշակերտների դասավանդող ուսուցիչների, ՀԽ անդամների և ծնողների ամենամսյա ժողովներին) | (հրավիրել ծնողական ժողովներ, անհատական աշխատանք իրականացնել խնդրահարույց աշակերտի ծնողների հետ, մանկատան սաների դաստիարակի հետ, հոգեբանի հետ, մասնակցել ԿԱՊԿՈՒ աշակերտների դասավանդող ուսուցիչների, ՀԽ անդամների և ծնողների ամենամսյա ժողովներին | (իրականացնել անհատական զրույց ծնողների հետ: Ծնողներին ներգրավել դաստիարակչական աշխատանքներին՝ ծնող-ուսուցող, ծնող- խորհրդատու: Համագործակցել ԿԱՊԿՈՒ աշակերտների ծնողների հետ, մանկատան սաների դաստիարակի հետ, հոգեբանի հետ) |

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| Դասի համարը | Դասի թեման |
|---|---|
| | **I** կիսամյակ |
| 1 | Աշակերտական խորհրդի ընտրություն: Աշակերտական խորհրդի կանոնադրության, աշակերտի իրավունքների և պարտականությունների իրազեկում: |
| 2 | Նախորդ ուստարվա արդյունքների վերլուծում, նոր ուստարվա անելիքների ծրագրում: Անվտանգության կանոնների պահպանում: |
| 3 | Ազնիվ ու անկեղծ հարաբերություններ իմ դասարանում: |
| 4 | Բոլորս տարբեր ենք, բոլորս հավասարապես արժանի ենք հարգանքի: |
| 5 | Ուսուցչի օր: Իմ ուսուցչուհին: |
| 6 | Ի՞նչ է խաղաղությունը: |
| 7 | Ի՞նչ է կոնֆլիկտը: |
| 8 | Խաղաղություն և կոնֆլիկտ: |
| 9 | Ընտանիք և պարտականություն: |

| | |
|---|---|
| 10 | Բարոյականություն և իրավունք: |
| 11 | Ինչպե՞ս կուզեիր ապրել: |
| 12 | Իմ իրավունքները: |
| 13 | Բնական աղետներ: |
| 14 | Տոնական ձևավորման աշխատանքներ: Սուրբ Ծննդի և Ամանորի խորհուրդը: |
| 15 | Ինչպես եմ փակում 1-ին կիսամյակը: |
| | **II** կիսամյակ |
| 16 (1) | 2-րդ կիսամյակի անելիքների քննարկում: |
| 17 (2) | Կենտրոնացնել ուժերը լավ սովորելու համար: |
| 18 (3) | Ո՞վ է պատասխանատու իմ իրավունքների համար: |
| 19 (4) | Ուզում եմ ունենալ պետություն, որտեղ… |
| 20 (5) | Քաղաքացիություն |
| 21(6) | Թումանյանական օրեր, գիրքը իմ կյանքում |
| 22 (7) | Արդար, ազնիվ և օրինապահ |
| 23 (8) | Աշակերտների գիտատեխնիկական զարգացում ՝ ՏՀՏ-ից ճիշտ օգտվելու կուլտուրայի ձևավորում: |
| 24 (9) | Մարտի 8-ը՝ Կանանց միջազգային օր |
| 25 (10) | Ուժը միասնության մեջ է |
| 26 (11) | Ես եմ տերը իմ հողի |
| 27 (12) | Պաշտպանել բնությունը նշանակում է պաշտպանել հայրենիքը |
| 28 (13) | Պահպանենք ու սիրենք մեր մոլորակը |
| 29 (14) | Վիկտորինա /Ստուգի՛ր գիտելիքներդ / |
| 30 (15) | Անձնանունների ստուգաբանություն /դասարանի սովորողների/ |
| 31 (16) | Այսօր ինքնաքննադատության օր է…Համարձակ եղի՛ր |
| 32 (17) | Լավ է, երբ…, վատ է, երբ… /բանավեճ/ |
| 33 (18) | Ի՞նչ տվեց ինձ այս ուսումնական տարին: |
| 34 (19) | Ամփոփիչ դաս: Մեր ձեռքբերումները և բացթողումները: |

Մասնակցել ԿԱՊԿՈՒ սովորողների դիտարկմանը, բացահայտմանը, գնահատմանը /սեպտեմբեր/ և մանկավարժահոգեբանական աջակցության համապատասխան ծառայությունների մշակման աշխատանքներին, դրանց ապահովմանը:

Մասնակցել երկու ամիսը մեկ անգամ ԿԱՊԿՈՒ աշակերտների դասավանդող ուսուցիչների, ՀԽ անդամների և ծնողների ժողովների աշխատանքներին:

Կազմակերպել /անհրաժեշտության դեպքում/ անբավարար գնահատականներ կամ ցածր առաջադիմություն ունեցող սովորողներին ուսումնական օգնություն: /Զրույց ծնողի և պարապող ուսուցչի հետ/:

Իրականացնել դասարանի համար սահմանված գործավարությունը, էլեկտրոնային գրանցումները:

Դպրոցի տնօրինությանը ներկայացնել սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն:

Կազմակերպել սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ /արշավներ բնության գիրկ, զրույցներ՝ անձնական հիգիենա, առողջ ապրելակերպ, վնասակար սովորույթներ/, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ և այլ միջոցառումներ:

Դպրոցի մանկավարժական խորհրդի քննարկմանը ներկայացնել սովորողի խրախուսանքի կամ կարգապահական տույժի վերաբերվող հարցեր:

## Դպրոց–ընտանիք կապը

Ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Պետք է ամուր պահել դպրոց – ընտանիք կապը, որպեսզի աշակերտները ավելի լավ սովորեն:

## Ծնողական ժողովներ

| Անցկացման օրը | Քննարկվող հարցեր | Համառոտ բովանդակությունը | Ծանոթություն |
|---|---|---|---|
| **1-**ին կիսամյակ | 1.Քարտուղարի ընտրության մասին<br>2.Ծնողների կողմից դասարանական ծնողական խորհրդի թվակազմը հաստատելու և խորհրդի անդամներ ընտրելու մասին<br>3. Ծնող-ուսուցիչ համակարգված կապի մասին<br>4. Կազմակերպչական հարցեր | | |
| | | | |
| **2-**րդ կիսամյակ | 1.2023-2024 ուստարվա 1-ին կիսամյակի առաջադիմության արդյունքների ամփոփում<br>2. 2 -րդ կիսամյակի ընթացքում նախատեսված աշխատանքների քննարկում<br>3. Կազմակերպչական հարցեր | | |
| | 1.Աշակերտների առաջադիմության հետ կապված հարցերի քննարկում<br>2. Կազմակերպչական հարցեր | | |
| | 1.2023-2024 ուստարվա 2-րդ կիսամյակի առաջադիմության արդյունքների ամփոփում<br>2. Էքսկուրսիայի կազմակերպում | | |

Դասարանի սոցիալական անձնագիրը

Դասարան_____7-րդ « բ»

Դասղեկ____Մալխասյան Ելենա

1. Երեխաների թիվը դասարանում_______________21

ա) աղջիկ_____________________________________________________14

բ) տղա_________________________________________________________7

2. Ընտանիքների թիվը ____________________________________20

ա) անապահով ընտանիքներ ___________________4

բ) բազմազավակ ընտանիքներ _________________3

գ) խնամակալություն__________________________________1

Դասղեկ՝ Ե. Մալխասյան